ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
պատմական գիտությունների թեկնածու
K86Mkrtchyan@gmail.com

ԻՐԱՆԱՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾ ԱՐՍԵՆ ՄԻՆԱՍՅԱՆ

Բանալի բառեր՝ իրանահայ, բարեգործ, դեղագործ, Ռաշտ, Երկրորդ աշխարհամարտ:

Իրանահայ բարեգործ, գիտնական և դեղագործ Արսեն Խաչատուրի Մինասյանը ծնվել է 1906 թ. Իրանի Գիլան նահանգի Ռաշտ քաղաքում: Սովորել է տեղի Անուշիրվան դպրոցում: Պատանեկության տարիներից ծանոթացել է հայ անվանի մտավորականներ Մկրտիչ Թաշճյանի, Հարություն Ստեփանյանի, Խաչատուր Մինասյանի գաղափարներին, յուրացրել «Սաթթար» կոմիտեի, Եփրեմի ու Մոէզօլսոլթանի հեղափոխական ավանդույթները: Այդուհանդերձ, հարկ է ընդգծել, որ նա չզբաղվեց քաղաքական գործունեությամբ:

Նա բարձրագույն կրթություն չուներ, բայց քանի որ հետաքրքրված էր քիմիայով, իր մասնագիտական գործունեությունը սկսել է բուսաբուժությամբ: Այդպիսով նա պատրաստում էր բուսական հիմքով դեղեր ու դրանք անվճար տրամադրում Ռաշտ քաղաքի և հարակից գյուղերի սոցիալապես անապահով մարդկանց[1]:

Երիտասարդ տարիներին նա երկու տարի ապրել է Ղազվինում, որտեղ սովորել է դեղեր պատրաստել: Վերադառնալով Ռաշտ՝ նա շարունակում է նույն գործը: Սակայն իրավիճակը փոխ-

[1] *Իրանահայոց հանրագիտարան,* կազմող՝ Ժանետ **Տ. Լազարյան,** Եր., «ՎՄՎ-Պրինտ», հրատ., 2012, էջ 266:

վեց, երբ 1941 թ. օգոստոսի վերջին խորհրդային զորքերը անցան սահմանը և մուտք գործեցին Իրան[2]:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին, երբ Գիլանում տարածված էր որովայնի տիֆը, Մինասյանը մինչև ուշ գիշեր չէր քնում, որպեսզի ավելի շատ դեղեր պատրաստեր, երբեմն գիշերը գնում էր Թեհրան՝ դեղերի համար անհրաժեշտ հումքը ձեռք բերելու: Նրա ջանքերով Ռաշտում ապրող մեծ թվով մարդիկ փրկվեցին: Սուրեն Մինասյանը եղբոր՝ Արսենի մասին հիշում է, որ հիվանդի մահճակալի մոտ անում էր ամենը, ինչ կարող էր:

Սակայն հասարակության մեջ, որտեղ մրցակցությունը շահույթ է հետապնդում, եթե ինչ-որ մեկը դեմ է դրան, նրան զրպարտում են: Որոշ դեղագործներ նրա դեմ բողոքում են նահանգապետին և առողջապահության վարչության պետին, որ նա խաթարել է նահանգում առևտրի բնականոն ընթացքը և իրենց մատնել սնանկության: Իրականում որոշ շահամոլներ մտածում էին հարստություն կուտակել՝ թանկ դեղեր վաճառելով, դրանք պահելով և ստեղծելով դեղերի պակասուրդ՝ դեֆիցիտ:

Հոգատար դեղագործը անշահախնդիր ծառայությունների պատճառով մեծ պարտքերի տակ է ընկնում և հայտնվում բանտում՝ նույնիսկ այդ պայմաններում չդադարեցնելով իր բարեգործությունները բանտարկյալների համար:

Այդուհանդերձ, Մինասյանի մարդասիրական ծառայությունները ստիպեցին Թեհրանի համալսարանին նրան դեղագործության պատվավոր դոկտորի կոչում շնորհել: Եվ նա 1942 թ. կարողացավ

---

[2] **Բայբուրդյան Վ.,** *Իրանի պատմություն,* Եր., «Զանգակ-97» հրատ., 2005, էջ 632:

հիմնել Իրանում առաջին 24-ժամյա դեղատունը՝ «Քարուն»-ը, Ռաշտում [3]:

1954 թ. նա Գիլանում հիմնադրել է Իրանի առաջին ժամանակակից առողջարանը[4]:

Որոշ ժամանակ անց նա դառնում է Գիլանի դեղագործների ասոցիացիայի տնօրենների խորհրդի անդամ: Նա իր ազնվությամբ ու սիրով տեղի բնակիչների շրջանում արժանանում է «Քրիստոսը մարմնավորված» կոչումին: Նրա անսահման բարությունը շատ բարերարների ու վաճառականների ստիպում է նրան նվիրել գումարներ և ոսկի, որպեսզի նա կարողանար ծախսել այնպես, ինչպես հարկն էր համարում:

Անվանի բարեգործը մեծ ծառայություններ է մատուցում իր հայրենակիցներին: Գիլանի հայ համայնքը նրան ընտրում է ղեկավար, երկար տարիներ եղել է Ռաշտի հայոց եկեղեցու խորհրդի անդամ: Նա ոչ մի օգնություն չխլեց ժողովրդից, ուստի կորցրեց իր կարողությունների մեծ մասը: Ի վերջո, նա որոշում է վաճառել դեղատունը: Դրա եկամուտներից վերցնում է 5000 թուման, որից 2000-ը հատկացնում է իր կնոջը, իսկ մնացածը ծախսում հաշմանդամների համար:

Հարկ ենք համարում ընդգծել, որ խնդրո առարկա դարձած ժամանակաշրջանում հայ համայնքը ապրում էր փորձության շրջան: Համայնքի կրթական կյանքը գտնվում էր «ընդհատակյա» պայմաններում: Այդ գործում չափազանց մեծ դեր խաղացին հայ կանայք և նրանց կազմակերպությունները: 1941 թ. Ռզա շահի ան-

---

[3] **Janet D. Lazarian (**2003): *Encyclopedia of Iranian Armenians:* Tehran: Hirmand Publisher: pp. 301–302:

[4] http://www.negahmedia.ir/media/show_podcast/48987

ان‌ی‌نـاس‌ی‌ان م‌ی‌آرسـن خاچـاطور

կումով վերացվեց հալածանքը և իրանահայությունը վերստին տեր կանգնեց իր իրավունքներին[5]:

Մեծ բարեգործի առաքինության մասին է վկայում այն, որ նա մերժում է խորհրդարանում հյուսիսային իրանահայության պատգամավորության առաջարկը, ինչպես նաև Գիլանի մուսուլման բնակչության կողմից իրեն առաջարկված Ռաշտի քաղաքապետի պաշտոնը և նախընտրում ապրել ժողովրդի մեջ՝ իր կյանքը նվիրելով քաղաքի կարիքավոր խավերի ցավերը հոգալուն, որի համար Ռաշտի ամբողջ բնակչությունը տեղական բարբառով նրան անվանում էր «*Արմանի բրար*» («Հայ ախպեր»):

Հենց այդ ժամանակ նրան օգնեցին իր ընկերները՝ դոկտոր Հաքիմզադեն, Այաթոլլա Զիաբարին, Հաջ Ռեզա Ազիմզադեն, Չինիչյանը, Հաջ Աղա Էնդուրանսը և բարեսիրտ մարդիկ:

Մինասյանը ապրող լեգենդ էր, նա Ռաշտի շատ անօթևանների հոգևոր հայրն էր: Դիտելով ապաստան չունեցող տարեց տղամարդկանց և կանանց իրավիճակը, որոնք դիմում էին նրան կացարանի հարցով, նրա մեջ առաջանում է ծերանոց կառուցելու գաղափարը: Այդ մասին Մինասյանն առաջինը առաջարկում է բժիշկ Հաքիմզադեին: Այն ժամանակ, երբ Թեհրանը ծերանոց դեռ չուներ, այս երկու մարդկանց օգնությամբ Ռաշտը համարվում էր ալտրուիստական՝ այլ անձանց բարեկեցության նկատմամբ հոգատարությամբ աչքի ընկնող քաղաք: 1960-ական թթ. կեսերին Այաթոլլա Զիաբարիի և չինացի մի գործարարի աջակցությամբ նա դարձավ առաջին բարեգործական կենտրոնի սեփականատերը, որը կառուցվեց տարեցների, հաշմանդամների և հոգեկան հիվանդների համար Ռաշտում[6]: Կենտրոնում նա ապրեց իր ամբողջ կյանքը:

---

[5] **Բայբուրդյան Վ.**, *Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ,* Եր., «Լուսակն» հրատ., 2013, էջ 28:

[6] http://gilanmosavar.com/?p=3607

Իրանի՝ Կասպից ծովի առափնյա առևտրային խոշոր կենտրոն Ռաշտում շատ հրդեհներ են եղել, որոնց ընթացքում դեղագործ Մինասյանը, որպես հրշեջ, մարում է տանիքների կրակները և փրկում ծխի մեջ խեղդվող խեցեղենը:

Հիշարժան է, որ Ռաշտի պարկ հյուսող բանվորների հացադուլի ժամանակ միայն Արսենն է, որ հրապարակ է գնում խուրմայի զամբյուղներով, հացով, պանրով ու կաթի շշերով, և ո՛չ ոստիկանությունը, ո՛չ էլ Մոհամմադ Ռեզա Փահլավի (1957–1979) շահի կառավարման տարիներին ժողովրդի մեջ սարսափ տարածած ՍԱՎԱՔ-ի[7]՝ գործակալները չեն համարձակվում կանգնեցնել բոլորի կողմից սիրված Արսենին:

Չնայած Արսենը քրիստոնյա էր, մեծ հարգանք է տածում մահմեդականների կրոնական հավատալիքների նկատմամբ և մասնակցում է Աշուրայի սգո արարողություններին: Ահա թե ինչու, երբ նա մտնում էր մզկիթներ, մարդիկ ոտքի էին կանգնում նրա պատվին և օրհնում նրան, որը իսլամական միջավայրում հայ գործչի նկատմամբ երբևէ դրսևորած ամենաբարձր պատիվներից է: Մինասյանը մահացել է 1977 թ. ապրիլի 3-ին Ռաշտի ծերանոցում ծառայելիս և թաղվել աննախադեպ բազմամարդ հուղարկավորությամբ՝ համաքաղաքացիներին կտակելով, որ մահից հետո լացելու փոխարեն շարունակեն իր գործը[8]: Մահվան հաջորդ օրը նրա մարմինը պետք է տեղափոխվեր հայկական եկեղեցի՝ հուղարկավորության համար: Սակայն նույն օրը նրա մարմինը առողջարանից տեղափոխվում է Լաքանի փողոցի սկզբնամաս, և այնտեղից՝

ت مـرز قائـل نبـودی‌انســان ی‌کـه بـرا ی‌کوکـــاری‌ان، ن‌ی‌نـاس‌ی‌آرسـن م

[7] ՍԱՎԱՔ-ի (պարսկերեն՝ ساواک) պաշտոնական անվանում է՝ Sazman-e Ettelaat va Amniyat-e Keshvar (Երկրի տեղեկատվության և անվտանգության ծառայություն), որը գործել է Մուհամեդ Ռեզա Փահլավի (1957–1979) շահի կառավարման տարիներին:

[8] «Ալիք» օրաթերթ, 17.06.2017:

մարդկանց ուսերի վրա տեղափոխվում հայկական եկեղեցի ու թաղվում այնտեղ:

Այսօր էլ Ռաշտի բնակչության մեջ դեռ թարմ է հիշողությունը Մինասյանի առաքինությունների մասին, որը խտրականություն չէր դնում մարդկանց միջև: Նրա թափանցող ու բարի աչքերն արդեն իսկ հիվանդներին ժպիտ էին պարգևում: Ահա, թե ինչու Գիլանում ասում են, որ Նովրուզի տոնի ավարտը համընկնում է մի բարեգործի լավ կյանքի ավարտի հետ, որին սիրում էին քրիստոնյաներն ու մահմեդականները[9]:

2002 թ., Իրաջ Սառաֆի աշխատասիրությամբ և Ղոլամռեզա Ֆարհանգ Ֆորութանի աջակցությամբ, պարսկերեն լույս տեսած «*Արսեն Մինասյանի հուշամատյանը*» վերնագրով գրքում նշվում է, որ երեխա ժամանակ, երբ տեսնում է ցրտի մեջ հնամաշ հագուստներով երեխաներ, նրանց տալիս է նվեր ստացած իր վերարկուն[10]: Նշելի է, որ գրքում առկա են մոտ 20 պարսիկ անվանի գործիչների և մտավորականների հուշերը՝ անվանի բարեգործի մասին: Գրքում տեղ գտած թեմաներից նշենք մի քանիսի վերնագրերը՝ «Արսենը՝ մարդասիրության օրինակ», «Անհունը», «Թակարդ դեղորայքի պահեստում», «Արսեն Մինասյան՝ հայ մահմեդականը», «Մի հուշ Մուսիո Արսենի մասին» և այլն:

Մինասյանին ճանաչող և նրա համաքաղաքացի Նոբախտի խոսքով՝ դեռ մանկուց լսել է Արսենի բարի համբավի մասին և, թերևս, դա է եղել այն պատճառներից մեկը, որ հայ անվանումը Ռաշտ քաղաքում և, ինչու չէ, ամբողջ Գիլան նահանգում հիշեցնում է հարգանք և սեր[11]:

---

[9] http://gilanmosavar.com/?p=3607

ت مـرز قائـل نبـودی‌انســان ی‌کـه بـرا ی‌کوکـــاری‌ان، ن‌ی‌نـاس‌ی‌آرسـن م

[10] «Ալիք» օրաթերթ, 12.05.2002:

[11] «Ալիք» օրաթերթ, 20.04.2002:

2001 թ. ապրիլի 13-ին, մահվան 24-րդ տարելիցի կապակցությամբ, Ռաշտի հայոց ազգային «Յորդանանեան» դպրոցում տեղի է ունեցել պարսիկ առաջադեմ գործիչների կազմակերպած հուշերեկո՝ նվիրված բարերարի հիշատակին[12]: Երեկույթի բանախոսն է եղել Ռաշտ քաղաքից մտավորական Ամիր Աբոլ Ղասեմին[13]: Հիրավի, նրա անունը պատիվ է բերում իրանահայությանը:

1997 թ. հունիսին ԻԻՀ նոր բարենորոգիչ նախագահ Մ. Խաթամին հանդես եկավ «տարբեր կրոնների ու քաղաքակրթությունների» միջև երկխոսություն սկսելու նախաձեռնությամբ՝ երկիրը քաղաքական մեկուսացումից դուրս բերելու համար[14]: Այդ համատեքստում հիշարժան է 2001 թ. մայիս ամսին «*Օվեյս Ղարանի*» բարեգործական հաստատության պաշտոնական նամակը[15] Ռաշտի քաղաքային խորհրդին[16]: Նամակի մեջ գնահատանքով է խոսվում Մինասյանի նվիրյալ գործունեության մասին: Նրա գործը համարվում էր որպես իսլամ և քրիստոնյա համայնքների համերաշխության ամենափայլուն մի նմուշ: Գիլանցիները խնդրում էին խորհրդին, որ քաղաքակրթությունների երկխոսության տարվա պատեհ առիթով դիմի հանրապետության նախագահին, վերջինս էլ, որպես բարձրաստիճան հոգևորական, առաջարկի Հռոմի պապին և Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ Մինասյանին տալ սրբի կարգավիճակ և հատուկ հանդիսության ընթացքում «Քրիստոսի շուք» տիտղոսը դաջվի նրա շիրմաքարին: Այդպիսով, նրա գերեզմանը կվերածվեր սրբատեղի, և Գիլան նահանգը կստանար զբոսաշրջային կարևոր նշանակություն:

---

[12] Նույն տեղում, 26.05.2001:

[13] Հուշ-երեկոյի վերաբերյալ հաղորդումը ներկայացվել է Ռաշտի ռադիո-հեռուստատեսության տեղական ծրագրերի բաժնում:

[14] **Բայբուրդյան Վ.,** *Իրանի պատմություն,* էջ 742:

[15] Նամակը պարսկերենից հայերենի է թարգմանել և «Ալիք» օրաթերթում հրապարակել Արտուշ Յովհաննիսեանը:

[16] «Ալիք» օրաթերթ, 26.05.2001:

Սակայն, հիշյալ նախաձեռնությունը այդպես էլ իրականություն չդարձավ, քանի որ այդ ուղղությամբ լուրջ քայլեր չձեռնարկվեցին: Այդուհանդերձ, Մինասյանի գործունեությունը լիովին համապատասխանում է միջքաղաքակրթական երկխոսության տրամաբանությանը:

2002 թ. ապրիլի 17-ին, Հայկական հարցերի ուսումնասիրության կենտրոնի նախաձեռնությամբ, Մինասյանի հիշատակին նվիրված մեծարման երեկոյի ընթացքում ճարտարագետ Կարեն Խանլարյանը վկայել է. «*Բազմիցս հանդիպեցի նրանց, ովքեր երդվում էին ոչ թե նրա հոգով, այլ՝ «Մուսիո Արսեն»-ի կյանքով*»[17]:

Համացանցում առկա է նաև մեծ բարեգործի կյանքին նվիրված պարսկերեն երգ, որի երգահանն է Հասան Թարիհին, երգի բառերի հեղինակը՝ Մոջթաբի Ղազին, երգիչը՝ Փույա Փուրյարին[18]:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ Արսեն Մինասյանի 115-ամյակը խորհրդանշում է հայ և իրանցի ժողովուրդների մեծ բարեկամությունը ոչ միայն խաղաղ և կայուն ժամանակներում, այլ նաև արտակարգ պայմաններում, երբ համաճարակի ճիրաններում հայտնված Ռաշտ քաղաքի բնակչությունը փրկվեց մի հայ դեղագործի անձնվեր առաքելությամբ: Նրա գործը համարվում է որպես իսլամ և քրիստոնյա համայնքների համերաշխության ամենափայլուն խորհրդանիշ:

---

[17] «Ալիք», 12.05.2002:

[18] https://www.youtube.com/watch?v=fiqLBCQNw_A
لانیگ حیمس - .انیناسیم آرسن یریتصـــو پی

ИРАНО-АРМЯНСКИЙ БЛАГОТВОРИТЕЛЬ АРСЕН МИНАСЯН

МКРТЧЯН К.

Резюме

Ключевые слова: Ирано-армянский, меценат, фармацевт, Рашт, Вторая мировая война.

В заключение можно сказать, что 115-летие Арсена Минасяна символизирует великую дружбу армяно-иранских народов не только в мирные и стабильные времена, но и в чрезвычайных ситуациях, когда самоотверженная миссия армянского фармацевта спасла население Рашта. Его деятельность считается самым ярким примером солидарности мусульманско-христианских общин.

THE IRANIAN-ARMENIAN BENEFACTOR: ARSEN MINASYAN

MKRTCHYAN K.

Summary

Keywords: Iranian-Armenian, philanthropist, pharmacist, Rasht, World War II.

In conclusion, we can say that Arsen Minasyan's 115th anniversary symbolizes the great friendship between the Armenian and Iranian peoples, not only in peaceful and stable times, but also in times of emergency, when the population of Rasht was rescued by the selfless mission of an Armenian pharmacist. His work is considered to be the most brilliant example of the solidarity between Muslim and Christian communities.